

Քրիստոս իր անձն զոհելով պողաւորեց իր հօտը, Գրիգոր Լուսաւորիչ իր անձը զոհելով 18 տարիներ խոր Վիրապին մէջ, լուսաւորեց մեզ, որոնք յարաբերաբար յիշեալ մտածումներու բաղդատմամբ, իրօք անփութարինեմի եւ անգին են:

Նետեւելով Տիրոջ Օրինակին, պիտի ըսեմ «Նմանիք Անոնց», բայց ինչպէս...

Նմանիլ՝ իւրաքանչիւրս հրաժարելով իր կարողութեանը չափով աշխարհիկ անձուկ հաճոյքներէ, որոնք հոգին կ'ապականեն պէսպիսի ձեւերով:

Նմանիլ՝ ապրելով Քրիստոնէականել կեանք մը:

Նմանիլ՝ կատարելով Անոր կամքը:

Նմանիլ՝ համբերութեամբ հանդուրժելով մէկս միւսին, Թէկուզ նուազագոյն զոհաբերութեամբ:

Նմանիլ՝ երբեմն զրկելով մեր անձերը աշխարհիկ բարիքներէ, օժանդակելով բարեկամին, հարեւանին, անկեալին, որբին, սգացողին:

Ինչպէս Աւետարանիչը կ'ըսէ... «Ով որ այս փոքրիկներէն մեկուն նոյնիսկ գաւաթ մը յուր տայ խմելու... վասան եղէք, որ իր վարձատրութիւնը պիտի չկորսնցնէ» (Մատթ. 10:42):

Եթէ գիտնականի մը գլուղը, մտաւորականի մը ստեղծագործութիւնը, շինականի մը յալողութիւնը եւ արհեստաւորի մը յառաջացումը իրենց աշխարհիկ տունկի պողաւորումն ու բարգաւաճումն է, յիշեալ մտածումները եւ Քրիստոսով կեանքը, մեր հոգեւոր կեանքի հատիկներու աճումն՝ պողաւորումն՝ եւ բարգաւաճումն են, ի փառս Աստուծոյ, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ եւ Հայ ազգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտեանից ամէն:

Աւետիս Աբեղայ Իփրաճեան

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ՀԱՅ ԿՐԾՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ

Վարդանանց շարժումը սկսուեց 449 թուականից, երբ Հայերն սկսեցին կազմակերպել պայքարը պարսկական կայսրութեան ձեռնարկած Հայաջինջ քաղաքականութեան դէմ: Նրանք դիմեցին դիւանագիտական, ռազմական եւ զաղափարական ինքնապաշտպանողական բոլոր Հնարաւոր ձեւերին: Փոխօգնութեան դաշինքներ կնքեցին Աղուանների, Վրացիների եւ Կովկասի լեռնական ցեղերի հետ: Բիւզանդիան Հրաժարուեց օգնութեան ձեռք մեկնել յանուն Քրիստոսի եւ Հաւատացեալ Հայ ազգի մղուող պայքարին: Ռազմական առումով, Հայ բոլոր ազատատենչ նախարարները Համատեղ ոյժերով անցկացրին զինավարժութիւններ, մշակեցին ճակատամարտի ուշագրաւ նախագիծ, եւ պատրաստուեցին երկարամեայ Հայդուկային պատերազմի: Գաղափարական տեսակէտից՝ Հայերը մշակեցին ազատագրական պայքարի մի այնպիսի փիլիսոփայութիւն, որն իր ներկայութիւնը Հաստատեց ազգային պատմութեան բոլոր յետագայ փուլերում: Այդ փիլիսոփայութեան շատ երակէտային դրոյթներ անմիջականօրէն կապուած էին քրիստոնէական վարդապետութեան եւ կրօնագիտութեան Հարցերի մեկնաբանութիւնների հետ: Այդ մենք յատկապէս նկատում ենք Վարդանանց շարժման անդրանիկ զաղափարախօս՝ Եղիշէի «Վարդանի եւ Հայոց Պատերազմի Մասին» աշ-

խատասիրութեան մէջ: Սկզբից եւ այդ նշենք, որ Վարդանանց շարժումը յաղթանակով աւարտուեց, երկարամեայ Հայդուկաին պատերազմից յետոյ, 484 թուականին: Այդ յաղթանակն իր կնիքը դրեց նաեւ Հայ ազատագրական շարժման գաղափարախօսութեան եւ Հայ Հոգեւոր Հայրերի վարդապետական — աստուածաբանական մտածողութեան վրայ, Հայ կրօնագիտական մտքի վրայ:

Քրիստոնէութիւնը ելնում է այն նախադրոյթից, որ մարդիկ պէտք է Հնազանդին իրենց աշխարհիկ տէրերին: Այդ դրոյթն ընդունում էին նաեւ Հայ քրիստոնեայ ապստամբները: Բայց վերջինները քաջ Հասկանում էին, որ այդ տեսակէտի բացարձականացումը կարող է Հանգեցնել այն վիճակին, երբ աշխարհիկ տէրերն իրենց Համարելով օրէնքից վեր եւ օրէնքի Հսկողութիւնից դուրս, կը սկսեն ապօրինութիւններ գործել: Այս պատճառով է՝ Վարդանանց պատերազմի գաղափարախօսները գտնում են, որ աշխարհիկ տէրերի իրաւասութիւնները սահմանափակուած են գերադաս սկզբունքներով եւ օրէնքներով, որոնց անտեսումը կարող է պատճառ Հանդիսանալ ժողովրդական ընդվզման կամ ապստամբութեան:

Աշխարհիկ տէրերն իրաւունք ունեն տիրելու նիւթական — մարմնական իրականութեան վրայ, բայց ո՛չ Հոգեւորի, որը ենթակայ է միմիայն աստուածային տնօրինութեան: Քրիստոս պատգամում էր, որ պէտք է կայսրին տալ միայն նրան պատկանողը, իսկ Աստծուն՝ մարդու Հոգեւոր կեանքը, գիտակցութիւնը: Երբ աշխարհիկ տէրը, ոտնձգութիւն անելով, ձգտում է տիրել այդ իրականութեանը՝ որն իրեն չի պատկանում, այլ Աստծուն, այդ ժամանակ նրա դէմ պայքարը արդարացուած է:

Պարսկական դեկապարութիւնը՝ ցանկանալով Հայերին բռնի կրօնափոխման ենթարկել՝ բռնանում էր նրանց Հոգու վրայ, Հաւատի վրայ, որոնք նրանք գիտակցօրէն դրել էին Աստուծոյ տնօրինութեան տակ: Այս պատճառով է՝ Եղիշէն գրում է. «Բայց մենք թէպէտեւ թոյլատուութիւն չունենք բամբասելու իշխաններին, բայց մենք չենք էլ կարող զովաբանել մի մարդու, որ Աստուծոյ դէմ է կռուում»:

Պարսիկները՝ Հայերից պահանջելով Հրաժարուել քրիստոնէութիւնից, փաստօրէն Հարց էին դնում քանդել Հայ եկեղեցին: Եկեղեցին Աստուծոյ տունն է, եւ պատկանում է միայն նրան: Աշխարհիկ տէրն այն քանդել կամ տիրանալ չի կարող: Դա օրինազանցութիւն է եւ խիստ պատմելի: Աստուծոյ նուիրեալները այդ քայլի դէմ արդարացիօրէն կը պայքարեն: Այդ մասին Վարդանանց շարժման գաղափարախօս Եղիշէն գրում է. «Եկեղեցին մարդու շինածը չէ, ո՛չ Թագաւորի պարգեւը, ո՛չ ճարտարարուեստի գործ, ո՛չ իմաստունների գիւտ, ո՛չ զինուորների քաջութեան աւար, եւ ո՛չ էլ դեւերի ստապատիր խաբէութիւն: Մեծ Աստուծոյ շնորհն է այն, որ տուել է ո՛չ թէ մարդկանցից ոեւէ մէկին, այլ բոլոր բանական ազգերին, որոնց վիճակուած է այս արեգակի տակ բնակուել: Նրա՝ Հիմքը դրուած է Հաստատուն վեճի վրայ, ո՛չ ներքեւիները կարող են շարժել, եւ ո՛չ էլ վերեւիները դղրեցնել: Իսկ ինչ որ երկինքն ու երկիրը չեն կարող խախտել,

թող մարդկանցից ո՛չ ոք չխրոխտայ յաղթել նրան»։ Այս Հարցադրումը ո՛չ միայն ուղղուած է Սասանեանների, այլև Օսմանցիների, Բոլշեւիկների, ու Եկեղեցին զանազան եղանակներով քանդել փորձող արտաքին ոյժերի դէմ։

Հայերի ազատագրական պայքարը Եղիշէն դիտում է նաեւ բարու եւ չարի տիեզերական առճակատման, մեղքի դէմ Քրիստոսի ծաւալած պայքարի, եւ Քրիստոսի խաչելութեամբ մարդու ձեռք բերած փրկութեան առումով։ Քրիստոս իրեն զոհաբերեց մարդու փրկութեան համար։ Երբ չար ոյժերը պայքար են ծաւալում մարդկութեան Փրկարարի դէմ, Քրիստոսով փրկուածների բնական պարտականութիւնն է պայքարել չարի դէմ։ Եղիշէն վերոյիշեալ միտքն արտայայտում է Հետեւեալ կերպով. «Եթէ անմահ էլ լինէինք, եւ պէտք լինէր մեզ՝ մեռնել Քրիստոսի սիրոյ համար, արժան էր. որովհետեւ նա՛ էլ անմահ էր, բայց անչափ սիրեց մեզ, որ մինչեւ անգամ մահ յանձն առաւ, որպէսզի մենք էլ նրա մահով փրկուենք յաւիտենական մահէից։ Ու եթէ նա իր անմահութիւնը չխնայեց, մենք՝ որ մե՛ր կամքով մահկանացու եղանք, մե՛ր կամքով էլ կը մեռնենք նրա սիրոյ համար, որպէսզի նա՛ էլ յօժարութեամբ ընդունի մեզ իր անմահութեան մէջ։ Կր մեռնենք իբրեւ մահկանացուներ, որպէսզի նա մեր մահն ընդունի որպէս անմահների մահ»։

Եղիշէն յատկապէս շեշտում է, որ Հայերի ապստամբութեան յաջող աւարտից ազդուելով՝ Պարսկաստանի Շահինշահը «խոնարհուեց իր բարձր Հպարտութիւնից, եւ վայրենացած սիրտը մարդկային բնութեան փոխակերպուեց. նայեց ու տեսաւ, որ ինքը լի է տկարութեամբ. հասկացաւ, որ չի կարող կատարել այն՝ ինչ որ կամենում է»։

Միասնութեան գաղափարաբանութեան որպէս փիլիսոփայական հիմք՝ Եղիշէն օգտագործում է նոր պղատոնական իմաստասիրութիւնը եւ պնդում. «Միաբանութիւնը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանութիւնը՝ չար»։ Բնական բաղադրամասերի կառուցի քայքայումը՝ մահուան պատճառներից մէկն է։ Միաբանութիւնը նշանակում է ընդհանուր եզրեր գտնել տուեալ կառուցի բաղադրամասերի միջեւ, եւ դրանց օգնութեամբ ամրապնդել կառուցի ներքին կապակցութեան ու ամբողջականութիւնը։ Այս պատճառով էլ, շարունակում է Եղիշէն, «երբ ներս է սպրդում երկպառակութիւնը, միաբանութիւնը քանդուելու հետ՝ հեռանում է նաեւ երկնաւոր առաքինութիւնը, եւ անձնասիրութիւնը աւելանալով՝ խիստ շատանում է լացն ու ողբը»։ Միասնական կամքով ու գաղափարականով Վարդանանց բանակում հանդէս եղողների շարքերում «տէրը ծառայից աւելի չէր երեւում, եւ ո՛չ էլ փափուկ մեծացած ազատը՝ տառապեալ զեղջուկից, եւ ո՛չ էլ մէկը միւսից աւելի պակաս՝ քաջութեան մէջ։ Միեւնոյն յօժար սիրտն ունէին բոլորն էլ՝ տղամարդ ու կին, ծեր ու տղայ, եւ Քրիստոսի անունով բոլոր միաբանութեանը»։ Այսպիսով՝ միաբանութեան, միասնութեան միւս հիմքը՝ Յիսուս Քրիստոսով եղբայրակցուած լինելու մէջ է։ Սոյն իրողութիւնը յատկապէս նշանակալից է, քանի որ Վարդանանց պատերազմը «հոգեւոր առաքինութեան կոիւ է»։ Այդ մասին

Եղիշէն գրում է, թէ Հայ Հոգեւորականները «ամենեւին չվախցան պատերազմի գալ նրանց (աշխարհականների) Հետ, քանի որ ո՛չ թէ մարմնական էին Համարում այդ կռիւը, այլ Հոգեւոր առաքինութեան կռիւ. ցանկանում էին իրենց քաջ զինուորներին մահակից լինել»:

Միասնութեան անհրաժեշտութիւնը ժամանակաշրջանի Հայ իմաստասէրները Հիմնաւորում էին նաեւ այն դրոյթով, որ ընկերութեան մէջ ամէն մի մարդ կամ խումբ՝ իրեն բնորոշ դերն ունի, որով իրար լրացնելով ստեղծում են քննականութիւնը բարօրութիւն: Ընկերութիւնը քառսի կը վերածուէր ու կ'ոչնչանար, եթէ բոլոր մարդիկ նոյն դերը կատարէին: Այս պատճառով էլ, տարբեր մարդիկ՝ տարբեր շնորհներ ունին, տարբեր գործեր են կատարում, մէկն իմաստասէր է, միւսը՝ արհեստաւոր, մէկը երաժիշտ է, միւսը՝ զինուորական, մէկն առեւտրական է, միւսը՝ Հոգազոր, մէկը Հոգեւորական է, միւսն աշխարհիկ, եւ այսպէս՝ մէկի ստեղծածը նաեւ բաւարարում է միւսի պահանջը: Դերակատարման տեսակէտից, այսպիսով՝ ընկերութիւնը միասնութիւն է պահանջում: Ընկերութիւնը նման է մարդու մարմնի, որի բնականոն գոյութեան Համար Համագործակցաբար պէտք է աշխատին զուտը, վիզը, ձեռքը, կուրծքը, ստամոքսը, եւ այլ մասերը: Կամ՝ ընկերութիւնը նման է բեմադրութեան, որի յաջողութիւնը պայմանաւորուած է դերակատարների Համագործակցութեամբ:

Ազգային միասնութեան սոյն գաղափարը բխում է Աստուածաշնչից: «Ինչպէս մի մարմնի մէջ բազում անդամներ ունենք, եւ բոլոր անդամները նոյն գործը չեն անում, այդպէս եւ մենք, թուով շատ, մի մարմին ենք Քրիստոսով, բայց իւրաքանչիւրս միմեանց անդամ ենք: Բայց մենք ունենք տեսակ-տեսակ շնորհներ, ըստ այն շնորհների՝ որ տրուած են մեզ» — Հռովմ. ԺԲ. 4-6:

Իրականութիւնը դիտելով իր աստիճանաւորութեան մէջ, Մաշտոցը, Եղիշէն ու Եզնիկ Կողբացին մարդուն Համարում են աշխարհիկ իրականութեան բարձրագոյն աստիճանը: Աստուածային կամքով նրան իրաւունք է վերապահուած՝ տիրելու բնութեան վրայ, եւ այս վայելելու: Միաժամանակ, այն աստիճանաւորութեան մէջ, մարդը՝ նրաթական եւ Հոգեւոր իրականութիւնն իրար կապող օղակն է, քանի որ նրա կառուցում Համադրուած է նրաթականն ու Հոգեւորը: Սոյն դրոյթը աւելի տպաւորիչ ձեւով արտայայտելով՝ Եղիշէն գրում է. «Մարդ, Աստուծոյ արուեստաւոր իմաստութեամբ, իրար կապուած երկնայինի եւ երկրայինի գեղեցիկ խառնուածքն է»: Այսպէս, ինչպէս երաժշտական գործիքի լաւագոյն Հնչեղութեան Համար՝ անհրաժեշտ է լաւագոյն գործիքի միասնութիւնը վարպետ կատարողի Հետ, այնպէս էլ օրինակելի մարդը ենթադրում է՝ ինչպէս մարմնական, այնպէս մի Հոգեւոր կատարելութեան որոշակի մակարդակ: Առնելազն, մարդ պէտք է ձգտի այդ երկուսի եւ դրանց միասնութեան կատարելութեան:

Այսպիսի Հարցադրումը Եղիշէն տանում է դէպի մարդ-Աստուած յարաբերութեան այն գաղափարին, որ իրենից յետոյ մշակում են Դաւիթ

Անյաղթն ու Գրիգոր Նարեկացին: «Ո՛չ ոք բերէ աշխարհի զնմանութիւն Աստուծոյ, բայց միայն մարդ. ո՛չ ումէք երեւի Աստուած, բայց միայն մարդոյ. ո՛չ ոք սիրէ Աստուած երկրէ, բայց միայն մարդ. Աստուած միայն մարդասէր, եւ մարդ միայն աստուածասէր. Աստուած մարդոյ, եւ մարդ Աստուծոյ. վասն մարդոյ Աստուած մարդացեալ, եւ վասն Աստուծոյ մարդ աստուածացեալ»: Մարդը միակ էակն է, որ իրաւասութիւնն ունի Աստուծոյ Հայր անուանելու: Մարդը Աստուծոյ զաւակն է:

Մարտիկն առաջին Հերթին պէտք է ազատուած լինի վախի կաշկանդումներից. վախ՝ որ իր Հետ բերում է այլ անցանկալի յատկութիւններ: «Վախը, գրում է Եղիշէն, թերահաւատութեան նշան է. թերահաւատութիւնը մենք վաղուց ենք մերժել մեզանից, նրա Հետ թող վախն էլ փախչի մեր մտքերից ու խորհուրդներից»: Հայ մարտիկը չպէտք է վախենայ շղթաներից, տանջանքներից, Հարստութիւնը եւ նոյնիսկ իր Ֆիզիքական գոյութիւնը կորցնելուց: Այդպիսի քաջութեանը ո՛չ ոք կարող է դիմադրել ու յաղթել: Պարսիկ զինուորականները իրենց պարտութիւնը բացատրելով Շահին՝ ասում են. «Մարդիկ (Հայերը), որոնք ո՛չ շղթաներից են վախենում, ո՛չ տանջանքներից երկիւղ կրում, եւ ո՛չ էլ Հարստութիւնը բանի տեղ դնում, եւ վերջապէս՝ որ բոլոր չարիքներից ամէնից վատթարն է՝ մահը զերադասում են կեանքից, ո՛վ կարող է դիմադրել նրանց»: Մենք վստահ ենք, որ այսօր ազերի զինուորականներ նոյն զեկոյցներն են տալիս իրենց ղեկավարներին՝ արդարացնելու Համար արցախեան ճակատներում իրենց պարտութիւնը:

Վախի վերացման, քաջութեան Հաստատման Համար՝ անհրաժեշտ է նախ Հաւատքը դէպի պայքարի արդարացիութիւնը, թերահաւատութեան յաղթահարումը, նիւթական արժէքների նկատմամբ կապուածութեան թուլացումը, եւ Հոգեւոր արժէքների նկատմամբ կապուածութեան ուժեղացումը: Հայ մարտիկների վարքը բնութագրելով Եղիշէն գրում է. «Վեր ընկած էր մնում ոսկին, եւ ո՛չ ոք՝ յատկապէս իր Համար՝ արծաթ չէր վերցնում. եւ առանց ազահութեան՝ արհամարհուած, անարգուած էին զարդարանքի ու մեծարանքի Համար յատկացուած Հագուստները: Ինչպէս եւ ամէն մի գոյք ոչինչ էր Համարում իր տէրերի աչքում»: Դժբախտաբար, այսօր նոյնը չենք կարող ասել պայքարող Հայութեան բոլոր ներկայացուցիչներին, նրանց նկատմամբ կարող ենք օգտագործել Եղիշէի Հետեւեալ բնութագրութիւնը. «Եթէ մէկը շատ ճոխացած լինի աշխարհական մեծութեամբ, իսկ մտքով աւելի աղքատ լինի, ապա այդպիսին շատերից աւելի ողորմելի է: Եթէ թազաւորն իմաստութիւնն իրեն ամոթոգակից չունի, չի կարող իր փիճակի մէջ վայելուլ լինել»:

Ազատագրական պայքարի մարտիկի Հոգին պէտք է Հարուստ լինի երկնաւոր առաքինութիւններով, քանի որ «ուժ Հոգիները թույլացած են երկնաւոր առաքինութիւնից, սաստիկ երկիւղի մէջ է ընկած նրանց մարմնի բնութիւնը. ամէն Հոգիից շարժուում է եւ ամէն խօսքից վրդուում է, եւ ամէն բանից դողում: Այդպիսի մարդը երազական բաներով է անց-

կացնում իր կեանքը»: Հոգեւոր եւ իմացական ոյժը երաշխիքներից է մարմնական ու կամային ոյժի: Այդ հիման վրայ էլ՝ «չհասկացուած մահը՝ մահ է, իսկ հասկացուած մահը՝ անմահութիւն: Ո՛վ չգիտի՝ թէ ի՛նչ է մահը, վախենում է մահից. իսկ ո՛վ գիտի մահը՝ նրանից չի վախենում»:

Իմացական, երկնաւոր արժէքների կարեւորութիւնը ազատագրական հոգեբանութեան համար՝ թելադրուած է այն հրամայականով, որ այդպիսի արժէքները երաշխաւորում են գործի, պայքարի, մտքի արդարացիութիւնն ու ճշգրտութիւնը: Որովհետեւ՝ «ինչպէս որ անիրաւութիւնից արդարութիւն չի լինի, այնպէս էլ ստութիւնից ճշմարտութիւն չի լինի, նմանապէս եւ խռովասէր մտքից՝ խաղաղութեան ակնկալութիւն»:

Ազատագրական պայքարի մարտիկի բնորոշ յատկութիւններից են, ըստ Եղիշէի, անկեղծութիւնը, սէրը եւ աղօթքը: Անկեղծութիւնը՝ խթանելով ինքնաճանաչումը, բարեկեցելով միջմարդկային յարաբերութիւնները եւ նուազեցնելով խաբկանքի հնարաւորութիւնները, ուժեղացրել է մարդուն: Աղօթքի միջոցով Աստուծոյ հետ հաղորդակցականութեան մէջ մտնելով եւ իր սեփական ճակատագիրը Աստուծոյ ձեռքը յանձնելով՝ մարդ հարստացնում է իր իմացական աշխարհն ու զօրացնում իր ինքնավստահութիւնը: Սէրը ներդաշնակում եւ զերազոյն կատարելութեան է մօտեցնում բնկերութեան կազմակերպութեան, զոհաբերութեան ոգին, ու խթանում փոխադարձ, անշահախնդիր օգնութեան միտումը: Այս գաղափարները խտացուած ձեւով արտայայտելով՝ Եղիշէն գրում է. «Մեծ բան է անկեղծութիւնը՝ տկարութեան օգնելու համար, ինչպէս աղօթքը՝ գիտութեան, եւ մաքուր սէրը՝ հասարակաց օգտի համար»:

Ազատագրական հոգեբանութիւնը՝ մարմնաւորելով առաքինութիւնը՝ պահանջում է, որ մարդ հանդուրժող, համբերող, աստուածապախ եւ աստուածապաշտ լինի, քանի որ, պնդում է Եղիշէն, «մեր սուրբ հայրերից յսել ենք, որ բոլոր առաքինութիւններից գլխաւորը՝ համբերութիւնն է ու կատարեալ աստուածապաշտութիւնը. եւ այս բանը՝ ո՛չ ոք չի կարող առանց չարչարանքի ձեռք բերել»: Պայքարի բովում՝ կատարելագործուում է մարդ, ու դառնում անելի՛ առաքինի:

Այսպիսով, մենք կարող ենք հանգիստ խղճով պնդել, որ Վարդանանց շարժումը իր կնիքն է թողել հայ կրօնական մտածողութեան վրայ, եւ նպաստել ուշագրաւ ու համաշխարհային հնչեղութիւն ունեցող հարցերի լուսաբանմանը: Այդ լուծումների որոշակի մասը դեռեւս չեն կորցրել իրենց արդիականացումը:

(Փասատեւա)

Փրոֆ. Գէորգ ԽՐԼՈՒԲԵԱՆ